ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ՝ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԻՋՈՑՈՎ

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐ ԹԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
Հունիս 2020

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	3-5
ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ	
Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն	6
Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն	7
Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	8-15
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԵԶԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ	16
Ղեկավարության Կողմից Աուդիտորին Ուղղված Հավաստագիր	17

Հեռ.՝+37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է Ռոզման համակարգերի արդիականացման ծրագրի (Ծրագիր) ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել 2015թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ Կառավարության և Եվրասիական Զարգացման Բանկի միջև կնքված Վարկային համաձայնագրով ֆինանսավորվող ("Վարկային համաձայնագիր") և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից Զրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի միջոցով (ԶՏ ԾԻՄ) իրականացվող "Ռոզման համակարգերի արդիականացման ծրագրի" ("Ծրագիր") հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրությունները:

Մեր կարծիքով՝ Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն "*Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով*" Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի (ՀՀՀՀՄՍ-դրամային սկզբունք):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության «*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» պարբերությունում:
Մենք անկախ ենք Ծրագրից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում – Դրամային միջոցների սկզբունքով հաշվետվությունների պատրաստում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծնթ. 2-ին, որտեղ ներկայացված է, որ այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են դրամային միջոցների սկզբունքով, որի պատճառով, այս հաշվետվությունները կարող են չհամապատասխանել այլ նպատակներով օգտագործման համար:

Հանգամանքի շեշտադրում –Ծրագիրը իրականացնող կառույցի փոփոխություն

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում 1.4-ին, որտեղ ներկայացված է Ծրագիրը իրականացնող կառույցի փոփոխությունը 14.01.2020թ-ից:

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

Հանգամանքի շեշտադրում – COVID-19

Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 11-ի վրա, որը նկարագրում է հաշվետու ամսաթվից հետո COVID-19 տարածման հնարավոր ազդեցությունը Ծրագրի վրա: Մեր կարծիքը չի ձևափոխվել այդ հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված "ՀՀՀՀՄՍ-դրամային միջոցների սկզբունք" ստանդարտի համաձայն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ղեկավարության կարծիքով, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած լինելու հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի հաշվետվություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացրած աուդիտը միշտ կհայտնաբերի բոլոր էական խեղաթյուրումները, երբ նրանք առկա են: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք՝ առանձին կամ միասին վերցրած, կազդեն հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություններ և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտմաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ՝ Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

BDO

Հեռ.՝ +37460 528899
էլ.փոստ՝ bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

ՀՀ, ք. Երևան
Դ. Անհաղթի 23/6, 5-րդ
հարկ, տարածք 7

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Մենք, ի թիվս այլ հարցերի, ղեկավարությանը տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Եզրակացություն իրավական այլ պահանջներին համապատասխանելու վերաբերյալ

Վարկային Համաձայնագրի պահանջների պահպանման նպատակով, Ծրագրի ղեկավարությունը պետք է ապահովի, որ.

1. Ֆոնդերն օգտագործվել են Վարկային Համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համապատասխան՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
2. Առհանման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Առհանման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն Վարկային Համաձայնագրի: Ծրագրի ղեկավարության կողմից հաշվետու տարվա վերաբերյալ ներկայացված Միջանկյալ Ֆինանսական Հաշվետվությունները համապատասխանում են հաշվապահական գրանցումներին:
3. Հատուկ հաշիվը վարվել է համաձայն Վարկային Համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:
4. Ֆինանսավորվող ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվել համաձայն Վարկային համաձայնագրի պայմանների և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցների:

Մեր կարծիքով, 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Ծրագրի ղեկավարությունը պահպանել է նշված պահանջները:

"Բի-Դի-Օ Արմենիա" ՓԲԸ
3 հունիսի, 2020թ.

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

Գնել Խաչատրյան, FCCA
Աուդիտոր

Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

		Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
		Հաշվետու տարի	Ամողական առ 31.12.2019թ.	Հաշվետու տարի	Ամողական առ 31.12.2019թ.	Հաշվետու տարի	Ամողական առ 31.12.2019թ.	
Դրամական միջոցների սկզբնական մնացորդ								
Ծրագրի հաշիվ (ԵԶԲ վարկ)		4,675,036.11	-					
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)		-	-					
Ծրագրի հաշիվ (Համայնքներ)		-						
		4,675,036.11						
Ֆոնդերի աղբյուրները								
ԵԶԲ Վարկ	10.1	3,211,444.71	9,486,673.11					
ՀՀ Կառավարության համաֆինանսավորում	10.2	520,028.33	851,031.60					
Համայնքների համաֆինանսավորում	10.3	279,694.59	279,694.59					
Ընդամենը		**4,011,167.63**	**10,617,399.30**					
Արտարժութային կորուստ		(337.36)	(2,922.02)					
Ֆոնդերի օգտագործում	9							
1. Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ, ուսուցումներ և ԾԻԳ-ի գործառնական ծախսեր:		3,301,151.46	4,901,343.75	4,730,575.10	6,330,767.39	(1,429,423.64)	(1,429,423.64)	40,000,000.00
2. Հարկեր և այլ պարտադիր վճարներ		520,394.21	848,812.82	910,179.00	1,238,597.61	(389,784.79)	(389,784.79)	10,000,000.00
3. Ծրագրի 3-րդ մասի շինարարական աշխատանքների համաֆինանսավորում		-	-	-	-	-	-	
Ընդամենը ծրագրային ծախսեր		**3,821,545.67**	**5,750,156.57**	**5,640,754.10**	**7,569,365.00**	**(1,819,208.43)**	**(1,819,208.43)**	**50,000,000.00**
Դրամական միջոցների վերջնական մնացորդ	6							
Ծրագրի հաշիվ (ԵԶԲ վարկ)		4,585,329.36	4,585,329.36					
Ծրագրի հաշիվ (ՀՀ Կառավարություն)		-	-					
Ծրագրի հաշիվ (Համայնքներ)		278,991.35	278,991.35					
Ընդամենը		**4,864,320.71**	**4,864,320.71**					

Մամիկոն Գասպարյան
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի
տնօրենի տեղակալ-Մասնաճյուղի տնօրեն
3 հունիսի, 2020

Նարինե Քեռյան
ՀՏԶՀ ՋՏ ԾԻՄ Գլխավոր հաշվապահ

Ծանոթագրությունների 8-15 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ըստ բաղադրիչների ֆոնդերի օգտագործման մասին հաշվետվություն
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

Բաղադրիչ	Փաստացի		Նախատեսված		Շեղում		ԾԳՓ
	Հաշվետու տարի	Աճողական առ 31.12.2019թ.	Հաշվետու տարի	Աճողական առ 31.12.2019թ.	Հաշվետու տարի	Աճողական առ 31.12.2019թ.	
Բաղադրիչ 1. Մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսի	2,611,893.43	2,871,646.43	3,855,259.06	4,115,012.06	(1,243,365.63)	(1,243,365.63)	11,880,000.00
Բաղադրիչ 2. Հիմնական և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում	958,788.30	1,882,644.86	1,415,209.84	2,339,066.40	(456,421.54)	(456,421.54)	12,040,000.00
Բաղադրիչ 3. ՋՕԸ-երի ներտնտեսային բաշխիչ ցանցի այդիականացում	125,526.25	716,895.34	185,281.76	776,650.85	(59,755.51)	(59,755.51)	20,260,000.00
Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում: ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ հնարավորությունների զարգացում և ՋՕԸ-երի ֆեդերացիաների ստեղծման պիլոտային ծրագիր	125,337.69	278,969.94	185,003.44	338,635.69	(59,665.75)	(59,665.75)	5,820,000.00
Ընդամենը ծրագրային ծախսեր	**3,821,545.67**	**5,750,156.57**	**5,640,754.10**	**7,569,365.00**	**(1,819,208.43)**	**(1,819,208.43)**	**50,000,000.00**

Մամիկոն Գասպարյան
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի
տնօրենի տեղակալ-Մասնաճյուղի տնօրեն
3 հունիսի, 2020

Նարինե Քեռյան
ՀՏԶՀ ՋՏ ԾԻՄ Գլխավոր հաշվապահ

Ծանոթագրությունների 8-15 էջերը կազմում են այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

---

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագիր

2015թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության և Եվրասիական Զարգացման Բանկի (ԵԶԲ) միջև ստորագրվել է վարկային համաձայնագիր, համաձայն որի ԵԶԲ-ն Հայաստանի Հանրապետությանն է տրամադրել է 40,000,000 ԱՄՆ դոլար •ումարի վարկ:

Վարկը տրամադրվել է «Ոռոգման Համակարգերի Արդիականացման Ծրագրի» (Ծրագիր) իրականացման նպատակով:

Ծրա•իրը արդյունավետ է դարձել 2016թ. հունիսի 10-ին: Ծրագրի ավարտը Գլխավոր Համաձայնագրով (հավելված 2) սահմանված է 2021թ. հունիսի 30-ը:

1.2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է.
ա) ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացում,
բ) ոռոգելի հողերի մակերեսի ընդլայնում,
գ) Ջրօգտագործող Ընկերությունների (ՋՕԸ) կառավարման հնարավորությունների զարգացում և տեխնիկական հագեցվածության ընդլայնում, Ջրօգտագործող Ընկերությունների ֆեդերացիաների ստեղծում:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

Բաղադրիչ 1. Մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոսի

Բաղադրիչ 2. Հիմնական և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում

Բաղադրիչ 3. ՋՕԸ-երի ներտնտեսային բաշխիչ ցանցի արդիականացում

Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում: ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ հնարավորությունների զարգացում և ՋՕԸ-երի ֆեդերացիաների ստեղծման պիլոտային ծրագիր

1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում

Ծրագիրը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից.

- ԵԶԲ վարկ - ծախսերի ֆինանսավորում 100%՝ բացառությամբ հարկերի,
- Հայաստանի Հանրապետության Կառավարություն (ՀՀ Կառավարություն)– հարկերի ֆինանսավորում,
- Համայնքներ- Ծրագրի 3-րդ մասի շինարարական աշխատանքների պայմանագրի գնի 10% :

Կատեգորիա	ԵԶԲ վարկ	ՀՀ Կառավա-ություն	Համայնքներ	Ընդամենը
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	
1. Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, ԾԻԳ-ի գործառնական ծախսեր:	40,000,000	-	-	**40,000,000**
2. Հարկեր և այլ պարտադիր վճարներ	-	10,000,000	-	**10,000,000**
3. Ծրագրի 3-րդ մասի շինարարական աշխատանքների համաֆինանսավորում	-	-	1,600,000	**1,600,000**
Ընդամենը	**40,000,000**	**10,000,000**	**1,600,000**	**51,600,000**

1.4. Ծրագրի իրականացում

Մինչև 2019թ. դեկտեմբերի 30-ը Ծրագիրը իրականացվել է ՀՀ տարածքային զարգացման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՋՏ ԾԻԳ) կողմից:

2019թ. դեկտեմբերի 30-ից դադարեցվել է ՋՏԾԻԳ-ի գործունեությունը՝ համաձայն 2019թ. փետրվարի 28-ի թիվ 170-Ն ՀՀ Կառավարության որոշման: ՋՏԾԻԳ-ի փոխարեն Ծրագրի իրականացման գործառույթները շարունակելու է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը՝ կառուցվածքային ստորաբաժանման միջոցով: 2020թ. Հունվարի 14-ին այդ նպատակով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ ստեղծվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղ (ՀՏԶՀ ՋՏ ԾԻՄ):

ՀՏԶՀ ՋՏ ԾԻՄ հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վարդանանց փակուղի 8:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «*Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամային միջոցների սկզբունքով*» Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

2.2. Հաշվապահական հաշվառման դրամային միջոցներ հիմունք

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների ստացման պահին: Ծրագրի ծախսումները ճանաչվում են որպես Ծրագրի ծախսեր դրանց վճարման պահին:

2.3. Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):
Տեղական արժույթով (ՀՀ դրամ, AMD) կատարված ՀՀ Կառավարության համաֆինանսավորումը և ծախսերը փոխարկվում են ԱՄՆ դոլարի գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից սահմանած փոխարժեքով:
Փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը տեղական արժույթով պահվող դրամական միջոցների վրա ներկայացվում է առանձին տողով Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվության մեջ:

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 483.75 դրամ:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքը՝ 1 ԱՄՆ դոլար = 479.70 դրամ:

2.4. Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

2.5. Բյուջե

Ծախսերի բյուջեն կազմվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի կուտակային ծախսերին գումարելով հաշվետու ժամանակաշրջանի թարմացված բյուջեն:

3. Առհանման դիմումների ամփոփ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Առհանման դիմումի համարը	Առհանման հաստատման ամսաթիվը	1. Խորհրդատվական ծառայություններ, շինարարական աշխատանքներ, ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	Ընդամենը
		ԱՄՆ դոլար	
8	29.01.2019	324,963.89	324,963.89
9	24.05.2019	1,450,565.11	1,450,565.11
10	02.08.2019	1,178,216.33	1,178,216.33
11	20.12.2019	257,699.38	257,699.38
Ընդամենը		**3,211,444.71**	**3,211,444.71**

4. Հատուկ հաշվի հաշվետվություն

Հաշվարկային հաշիվ	900000901794
Բանկ	Կենտրոնական գանձապետարան
Հասցե	Մելիք-Ադամյան 1, Երևան, 0010, Հայաստանի Հանրապետություն,
Արժույթը	ԱՄՆ դոլար

	ԵԶԲ Վարկ
	2019թ.
1. Սկզբնական մնացորդ	4,675,036.11
2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն	-
3. ԵԶԲ ֆոնդի կանխավճար/համալրում	3,211,444.71
4. Նվազեցում. Հատուկ հաշվից մարում ԵԶԲ-ին	-
5. Հատուկ հաշվին համալրված գումարի ներկա մնացորդը	**7,886,480.82**
6. Հատուկ հաշվի վերջնական մնացորդ 31.12.2019 դրությամբ	4,585,329.36
7. Ավելացում. վճարված ընդունելի ծախսերի գումար	3,301,151.46
8. Նվազեցում. ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են Հատուկ հաշիվ)	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	**7,886,480.82**
10. Տարբերություն (5)-(9)	-

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներառում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Հաշվետվությունը պատրաստված է հաշվեգրման սկզբունքով, որտեղ գործարքները ճանաչվում են կատարման պահին (այլ ոչ՝ ստացման կամ վճարման պահին):

		31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ	6	4,864,320.71	4,675,036.11
Կանխավճարներ	7	753,165.26	33,015.75
Ընդամենը ակտիվներ		**5,617,485.97**	**4,708,051.86**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կրեդիտորական պարտավորություններ	8	363,399.95	42,287.07
Ընդամենը պարտավորություններ		**363,399.95**	**42,287.07**
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ			
Աճողական մուտքեր			
ԵԶԲ Վարկ	10.1	9,486,673.11	6,275,228.40
ՀՀ Կառավարություն	10.2	851,031.60	331,003.27
Համայնքներ	10.3	279,694.59	-
		10,617,399.30	**6,606,231.67**
Աճողական ծախսումներ			
Ծրագրի ծախսումներ		(5,366,868.37)	(1,936,384.97)
		(5,366,868.37)	**(1,936,384.97)**
Արտարժույթի փոխարժեքային օգուտ/(կորուստ)		3,555.09	(4,081.91)
Ընդամենը զուտ ակտիվներ		**5,254,086.02**	**4,665,764.79**

6. Դրամական միջոցներ

	Բանկ	Արժույթը	31.12.2019 ԱՄՆ դոլար	31.12.2018 ԱՄՆ դոլար
Ծրագրի հաշիվ (ԵԶԲ վարկ)	Գանձապետարան	ԱՄՆ դոլար	4,585,329.36	4,675,036.11
Ծրագրի հաշիվ (Համայնքներ)	Գանձապետարան	ՀՀ դրամ	278,991.35	-
Ընդամենը			**4,864,320.71**	**4,675,036.11**

7. Կանխավճարներ

	31.12.2019	31.12.2018
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Շինարարական աշխատանքների գծով	753,165.26	-
Խորհրդատվական ծառայությունների գծով	-	32,740.56
Գործառնական ծախսերի գծով	-	275.19
	753,165.26	**33,015.75**

8. Կրեդիտորական պարտավորություններ

	31.12.2019	31.12.2018
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Շինարարական աշխատանքների գծով	332,198.87	41,612.35
Խորհրդատվական ծառայությունների գծով	31,201.08	674.72
	363,399.95	**42,287.07**

9. Ծրագրային ծախսեր

9.1. Ծրագրային ծախսերի բաշխումը ըստ ֆոնդերի

Ծախսային հոդվածներ	Հաշվետու տարի			Կուտակային 31.12.2019թ. դրությամբ		
	ԵԶԲ Վարկ	ՀՀ Կառավարություն	**Ընդամենը**	ԵԶԲ Վարկ	ՀՀ Կառավարություն	**Ընդամենը**
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
1. Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ, ուսուցումներ և ԾԻԳ-ի գործառնական ծախսեր:	3,301,151.46	-	**3,301,151.46**	4,901,343.75	-	**4,901,343.75**
2. Հարկեր և այլ պարտադիր վճարներ	-	520,394.21	**520,394.21**	-	848,812.82	**848,812.82**
3. Ծրագրի 3-րդ մասի շինարարական աշխատանքների համաֆինանսավորում	-	-	-	-	-	-
Ընդամենը	**3,301,151.46**	**520,394.21**	**3,821,545.67**	**4,901,343.75**	**848,812.82**	**5,750,156.57**

9.2. Ծրագրային ծախսերի բյուջեի կատարում

Ծախսային հոդված	Առողջական ծախսումներ 31.12. 2019թ. դրությամբ ԱՄՆ դոլար	Ընդամենը բյուջե ԱՄՆ դոլար	Կատարում %
1. Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ, ուսուցումներ և ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	4,901,343.75	40,000,000.00	12%
2. հարկեր և այլ պարտադիր վճարներ	848,812.82	10,000,000.00	8%
3. Ծրագրի 3-րդ մասի շինարարական աշխատանքների համաֆինանսավորում	-	1,600,000.00	-
Ընդամենը	**5,750,156.57**	**51,600,000.00**	**11%**

10. Ֆինանսավորում

10.1. Վարկ ԵԶԲ

	Հաշվետու տարի ԱՄՆ դոլար	Առողջական առ 31.12.2019 ԱՄՆ դոլար
Կանխավճար / (մարում)	-	5,000,000.00
SOE և Summary Report	3,211,444.71	4,486,673.11
Ընդամենը	**3,211,444.71**	**9,486,673.11**
Ընդամենը բյուջե		**40,000,000.00**
Առ 31.12.2019 տրամադրված ֆինանսավորում %		**24%**

10.2. ՀՀ Կառավարություն

	Հաշվետու տարի ԱՄՆ դոլար	Առողջական առ 31.12.2019 ԱՄՆ դոլար
Ֆինանսավորում	520,028.33	851,031.60
Ընդամենը բյուջե		**10,000,000.00**
Առ 31.12.2019 տրամադրված ֆինանսավորում %		**9%**

10.3. Համայնքների համաֆինանսավորում

	Հաշվետու տարի ԱՄՆ դոլար	**Ամբողջական առ 31.12.2019** ԱՄՆ դոլար
Ֆինանսավորում	279,694.59	279,694.59
Ընդամենը բյուջե		1,600,000.00
Առ 31.12.2019 տրամադրված ֆինանսավորում %		17%

11. Հաշվետու ամսաթվից հետո կատարված դեպքեր

Հաշվի առնելով նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) լայն աշխարհագրական տարածումը 2020թ.-ի ընթացքում, ինչպես նաև Հայաստանի ամբողջ տարածքուն 2020թ. մարտի 16-ից մինչև հունիսի 13-ը արտակարգ դրություն սահմանելու մասին ՀՀ Կառավարության որոշումը՝ Ծրագրի ղեկավարությունը գտնում է, որ ստեղծված իրավիճակը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ Ծրագրի վրա, մասնավորապես այն կարող է հանգեցնել.

- Աշխատանքների իրականացման ժամկետների հետաձգման,
- Ծրագրի համակարգման դժվարությունների, և
- Սահմանափակումներից բխող այլ բացասական հետևանքների:

Ելնելով իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ծրագրի ղեկավարությունը հնարավոր չէ համարում գնահատել վերոնշյալ դեպքի ֆինանսական հետևանքը:

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԵԶԲ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ

2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

(ԱՄՆ դոլար)

Ծախսային հոդված	Դիմում	Ծրագիր	ԵԶԲ	Տարբերություն
1. Ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ, ուսուցումներ և ԾԻԳ-ի գործառնական ծախսեր	8	324,963.89	324,963.89	-
	9	1,450,565.11	1,450,565.11	-
	10	1,178,216.33	1,178,216.33	-
	11	257,699.38	257,699.38	-
Ընդամենը		**3,211,444.71**	**3,211,444.71**	

Ղեկավարության Կողմից Աուդիտորին Ուղղված Հավաստագիր

3 հունիսի 2020

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
Դ. Անհաղթ փող. 23/6, 5-րդ հարկ
Երևան, Հայաստան

Հավաստումների սույն գրությունը ներկայացվում է 2015թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ Կառավարության և Եվրասիական Զարգացման Բանկի միջև կնքված Վարկային համաձայնագրով ֆինանսավորվող (“Վարկային համաձայնագիր”) և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման մասնաճյուղի միջոցով իրականացվող “Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի” (“Ծրագիր”) 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտի առնչությամբ:

Մենք գիտակցում ենք մեր պատասխանատվությունը, որ.

- Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՀՀՄՍ դրամային հիմունքի համաձայն,
- Հաշվապահական հաշիվները և ֆինանսական փաստաթղթերը ճշգրիտ են և ամբողջական, և ներկայացնում են իրական փաստերը Ծրագրի նպատակներին և ազգային օրենսդրությանը համապատասխան:
- ներքին վերահսկողության ձևավորում և իրականացում խարդախությունը կանխելու և հայտնաբերելու նպատակով:
- Ծրագրի վերաբերյալ ստացված կամ մեր կողմից ֆինանսավորման հետ կապված տեղեկատվության ամբողջականությունը և համապատասխանությունը
- ցանկացած տեղեկատվության և բացահատումների առկայություն, բանավոր կամ գրավոր հաստատմամբ, որոնք կարող են պահանջվել աուդիտորի կողմից աուդիտի իրականացման ընթացքում:

Մեր գիտելիքներն ու համոզվածությունը հիմք ընդունելով՝ հավաստում ենք, որ.

- Մենք Ձեզ տրամադրել ենք բոլոր հաշվապահական գրքերը և օժանդակ փաստաթղթերը:
- Չկան էական գործարքներ, որոնք պատշաճ կերպով գրանցված չեն եղել Ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած հաշվապահական հաշվառման հաշիվներում:
- Ներքին հսկողության համակարգը հուսալի է. Ֆինանսական և այլ փաստաթղթերի հաստատումը և վերահսկողությունը, պարտականությունների տարանջատումը, կատարվում է պատշաճ կերպով,
- Ծրագրի միջոցներն օգտագործվել են համաձայն սահմանված բյուջեի,
- Ֆինանսական գործարքներն իրականացվում են ծրագրի նպատակներին և Դրամաշնորհային համաձայնագրի պայմաններին համապատասխան:
- Ֆինանսական միջոցները օգտագործվել են խնայողակա և արդյունավետ եղանակով:
- Չի եղել որևէ խախտում ղեկավար կազմի կամ աշխատակիցների ներգրավման մեջ, որոնք նշանակալի դեր ունեն հաշվապահական հաշվառման և ներքին հսկողության համակարգերում, և որը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական սխալներից և բացթողումներից,
- Չեն գրանցվել վերահսկող կազմակերպությունների կողմից հակաօրինական փաստերի կամ խախտումների բացահայտում, որոնք էական ազդեցություն կունենային ֆինանսական հաշվետվությունների վրա:
- Ֆինանսական հաշվետվությունների ամսաթվից հետո որևէ իրադարձություն չի՝ եղել, որը պահանջում է ճշգրտում կամ բացահայտում ֆինանսական հաշվետվություններում:
- Չկան փաստացի կամ սպասվելիք հայցեր:
- Մեր կողմից չեն բացահայտվել խարդախության փաստացի կամ կասկածելի դեպքեր, որոնք ազդում են Ծրագրի վրա և կապված են հետևյալ անձանց հետ.
  ա. Ղեկավարություն,
  բ. Ներքին հսկողության գործում նշանակալի դեր ունեցող աշխատակիցներ, կամ
  գ. այլ անձինք, եթե խարդախության դեպքը կարող է էական ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա:

Մամիկոն Գասպարյան
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի
տնօրենի տեղակալ-Մասնաճյուղի տնօրեն

Նարինե Քեռյան
ՀՏԶՀ ՋՏ ԾԻՄ Գլխավոր հաշվապահ

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի Ջրային Տնտեսության Ծրագրերի Իրականացման Մասնաճյուղ